

6
872
ՄԱՆԿԱԿԱՆ ՍԵՐԻԱ

7. Թ Ո Ո Ւ Ի

Ք Ի Ն Ա Ճ Ե Տ Ե Ր

Ռուս. թարգմ. Ս Ի Մ Ա Կ

Հ. Ս. Խ. Հ. ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1927

78

Մ Ս Կ Ե Ս Կ Ս Կ Ս Ե Ր Ի Ս

Գ. ՌՈՈՒ

ՔԻՆԱՃԵՏԵՐ

1528-57

A I
8466




Ռուս. թարգմ. ՍԻՄԱԿ



Հ. Ս. Խ. Հ. ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1927

Հրատարակվում է Սոցիալազիստական կից գործող
Մանկական գրականութ. Հանձնաժ. հավանությամբ



I ԾՂՈՏԵ ՎՈՏՆԱՄԱՆՆԵՐ

Ա՛խ, իմ փոքրիկ Տինգ-Փուկ, ի՛նչ ցուրտ ե
այսօր. — ասու՛մ եր մի թշվառ շինացի կին, վա՛ր
սաստիկ դողալով կանգնած եր իր փոքրիկ տնակի
դռանը:

Նրա վորդի Տինգ-Փուկը կանգնած եր նրա
մոտ և նայու՛մ եր Ռիկշի փողոցի իրենց տան
ու ուրիշ տների մեջ ընկնող նեղ ճանապարհի
յերկարութեամբ: Չինաստանում ուրիշի չեն ասում
թեթև, յերկանիվ սայլակին, վորին վոչ թե ձի
չեն լծում, այլ մարդիկ Լն քաշում. եղ մարդ-
կանցն ել են ուրիշի ասում:

— Ամբողջ յերկու որ ե, անձրև ե դալիս. —
և ինչ սարսափելի անձրև: Ուղղակի կարծես
արծաթե յերկար ասեղներ լինեն: Թվում ե, թե
կարող են ծակել, անցնել մեր միջով:

Տինգ Ֆունգն ել եր դողացնում, և ձեռքերը
խոր անց եր կացնում թևերի մեջ, վոր շատ
չմրսի:

Գետի նման ջուր եր հոսում փողոցով, և
ռիկշինների տնակների ծղոտե տանիքները, վորոն-
ցից ջուրը շիթ առ շիթ թափվում եր, շատ մեծ
անձրևանոցի եյին նմանում:

Մինչ մայրն ու Տինգ Ֆունգը խոսում եյին
ու դլուխները պտտում, հայրը վերադարձավ:
Նա իր յետևից քաշ եր տալիս իր դեղին ռիկշին
և մինչև ծնկները ջրի մեջ առաջ գալով, նավա-
կավարի չեք նմանվում: Իսկ նրա ռիկշին, կար-
ծես, անիվներով լողացող նավակ լինելու:

Ռիկշին լողաց դեպի ուղիղ նրանց տան
դուռը: Տինգ Ֆունգն ու մայրը տեսան, թե
հայրն ինչպես ռիկշին քարշ տվեց տուն և կանգ-
նեցրեց սենյակի մի անկյունում: Հետո նա
վերցրեց իր ծղոտե գլխարկը և դուրսը թափ տվեց,
ճիշտ այնպես, ինչպես իրենց թափահարում են
շները, չեք ուզում են չորանալ: Մայրն սկսեց
ընթրիք պատրաստել: Սենյակի մի անկյունում,
կարմիր կավից շինած ոջախ ուներ նա: Մայրը

ծղոտե հին վոտնամաններ և մի քանի փուռն
չոր խոտ վառեց, վորպեսզի ընթրիք պատրաստի:

Հայրն ասաց Տինգ-Փուռնգին: — Իմ ամենափոքր
հասակից մինչև այժմ դեռ չերբեք այսպիսի
անձրև չի յեղել: Մի մտածիր ե: Բու-Մեն-Չաո
փողոցում ջուրը ծնկից բարձր է, և համարյա
բոլոր տներում ջուր է կանգնած:

— Ի՞նչ եք կարծում, այս անձրևը չերբե-
կիցե կդադարի, — հարցրեց Տինգ-Փուռնգը, ա-
կանջ դնելով, թե անձրևն ինչպես է կրտկրտում
կտերը և թմբկահարում դուրսը դրած թիթեղյա
դուլը:

— Բոլոր ուկշիններն ասում են, վոր եգուց
կպարզի: Յես ել հույս ունեմ, վոր եդպես պետք
է լինի: Այսոր յես հետս վեց զույգ ծղոտե վոտ-
նամաններ ելի վերցրել, և բոլորը ցեխի մեջ
կորցրի: Իսկ մորդ հարկավոր են նրանք, վոր
ոջախը վառի. — ասաց հայրը: Չինացի ուկշինները
ծղոտե վոտնամաններ են հագնում: Անձրևային
յեղանակներին այդ վոտնամանները շատ շուտ
մաշվում են. — ուկշինները հանում, զցում են հենց
փողոցում և նորն են հագնում: Չինացի ժողո-
վուրդն աղքատ է և շատ խնայող. ուստի և
Տինգ-Փուռնգն ասաց.

— Յեթե վաղը արև որ լինի, հայրիկ, յես
շատ հին վոտնամաններ կհավաքեմ: Մենք կչո-

րացնենք, և մայրս յերկար ժամանակ վառելիք
կուենենա:

Վոտնամաններ հավաքելը մի տեսակ խաղ
ե, վոր խաղում են շինացի յերեխաները անձրևից
հետո: Նրանք շրջում են բոլոր փողոցներով,
հավաքում հին, թաց, ցեխոտ վոտնամանները և
քարշ տալով տանում են տուն:

Նրանք հաշվում են, թե ո՞վ շատ վոտնաման
կհավաքի, և նա ո՞վ ամենից շատ վոտնաման է
տուն տանում, նա յեւ համարվում է խաղը
տանողը:

Մյուս որն, առավոտը վազ, անձրևը դա-
դարեց և պայծառ ու վառ արևը փայլեց: Նա
շատ շուտով չորացրեց ջրով ծածկված փողոց-
ները: Մայրն ասաց Տինգ-Փունգին, - պետք է
վոտնամաններ փնտրելու դնալ, Տինգ-Փունգ:
Թողը վերցրո՞ւ, վոր վոտնամանները կապես և,
ինչքան կարելի յե, շատ բերես: Աշխատիր մինչև
ճաշ՝ գոնե մի քիչ բերես, վոր մինչև ընթրիքը
ժամանակ լինի չորացնելու: Ոջախում վառելու
յես ել վոչինչ չունեմ:

Տինգ-Փունգը շատ եր հպարտանում, վոր
մայրը նրան բանի տեղ է դնում և հանձնարա-
րում՝ վորքան կարելի յե շատ վոտնամաններ
բերել: Յեթե տա վոտնամաններ չբերի, ընթրիք
չի պատրաստվի, և հայրը, վոր հոգնած վերա-

դատնուով եւ աշխատանքից, ուսուցիչու բանն չի ու-
նենաւ:

Տինգ-Փուլնգը իր անդրավարտիկը վեր բաշեց,
վոր չկեղատասովի, իր չերկար վերնաշապիկը ամրաց-
րեց գոտով: Հետո թուկը վերցրեց ու ճանապարհ
ընկավ:

Ռիկշիներն ամենից ավելի անցուդարձ են
անուով Մեծ. Չիու վողոցով, ուստի Տինգ-Փուլնգը
ամենից առաջ այնտեղ վազեց: Այնտեղ արդեն
շատ յերեխաներ կային, և բոլորն ել վոտնաման-
ներ ելին փնտրուով:

— Ե՛յ, Ռիկշի վողոցի Տինգ-Փուլնգ, աղա-
ղակեցին նրանք, արի տեսնենք՝ ո՞վ շատ կհա-
վաքի: Մենք հենց նոր ենք սկսել փնտրել: Թուկ
ուհնիս:

— Յես հորս ամենաերկար թուկն եմ վերց-
րել, — պատասխանեց Տինգ-Փուլնգը: Բայց դուք
ժամը տասներկսին տուն պիտի գնաք թե չե:
Յես պետք ե կեսորից հետո տուն վազեմ, վոր-
պեսզի կարելի լինի վոտնամանները մինչև ընթ-
րիքի ժամանակը չորացնել, թե չե՝ ընթրիք
պատրաստելու համար վառելիք չենք ունենա:

— Այո՞ — աղաղակեց վրցության առաջ-
նորդը, ժամը մոտավորապես տասներկսին, մենք
տանը կլինենք:

Ու յերեխաներն սկսեցին փնտրել: Շատ

ուրախ ելին: Նրանք ամենևին ուշք չեկին դարձ-
նում ցեխին, թեև ցեխը շատ սառն էր:

Առաջին վոտնաման գտնողը Տինգ-Փուենգն
էր: Դա ընկած էր ճանապարհի ավին և ուղղակի
մի փունջ ցեխոտ ծղոտի յեր նմանում: Բայց
Տինգ-Փուենգը վոր գտավ, ուրախությունից ճչաց,
ու բոլոր յերեխաներն ել ճչացին նրա հետ:
— Բաղդավոր Տինգ-Փուենգ: Ի՞նչ բաղդավոր էս:

Տինգ-Փուենգը վոտնամանը քարձրացրեց և
կրնկի ծակված տեղից թոկն անցկացրեց: Թոկն
ուսը զցելով, նա վոտնամանը իր յետևից ճանա-
պարհով քարշ էր գալիս: Մի վոտնամանը քարշ
տալը շատ հեշտ է, բայց յերբ արդեն 20,30
վոտնաման էս թոկն անցկացնում, քարշ տալը
շատ է դժվարանում:

Մոտ մի ժամ էր, յերեխաները վոտնաման-
ներ ելին փնտրում, և Տինգ-Փուենգը ամենից ա-
ռաջ էր: Նա 25 վոտնաման ուներ, իսկ նրա
յետևից գնացող աղջիկը՝ միայն 16-ը: Յերեխա-
ների (տղա-աղջիկ) մի ամբողջ ամբոխ գնում էր
Մեծ Ձիու յերկար փողոցով և ուկչիներ յեր
մեջ թողած բոլոր վոտնամանները հավաքում էր:
Հետո նրանք Հյուսիսային Դոներ փողոցով շուռ
յեկան դեպի ցած: Մեծ Ձիու փողոցից շատ
ավելի նեղ էր այդ, բայց այդտեղ ավելի մեծ
շարժում կար. — մեծ քանակությամբ կառքեր ու

ռիկշաներ եյին անցնում: Այստեղ ենպես սոս-
կալի ցեխ չեր, բայց մարդկանց, կառքերի ու
ռիկշաների ամբոխի մեջ, յերեխաներն ստիպված
եյին շատ զգուշ լինել:

Տինգ-Փունգը համարյա հավատացած էր, վոր
ինքն է տանելու մրցութունը, նա կարողանում
էր ամենքից արագ կռանալ, վոտնամանը ցեխի
միջից դուրս քաշել և արագ վազող ձիու առջևից
հեռու փախչել: Նա յերեխաների մեծ մասից
քաջ էր ու չեր վախենում թռչել ուղիղ կառքերի
առջևը և վոտնամանը թոցնել համարյա ռիկշի
կամ ձիու վոտքերի տակից:

Հանկարծ, այն աղջիկը, վոր Տինգ-Փունգից
վեց վոտնաման պակաս էր հավաքել, միանգամից
չորս վոտնաման տեսավ: Չորս վոտնամանն էլ
միասին ընկած եյին մի խոր ջրանցքի ափին: Նա
վազեց, վոր վերցնէ ու քիչ էր մնում ջրանցքն
ընկնի: Նա աղաղակեց և Տինգ-Փունգը նրան
ոգնության հասավ:

— Ուզում եյիր լողանալ, հմ, ասաց նա
ծիծաղելով և ոգնեց աղջկան՝ ջրանցքից դուրս
գալու: Հետո նա մտավ խոր ջրանցքը, վոր աղջկա
համար այն վոտնամանները հանի:

— Վերցրու քեզ, Տինգ-Փունգ, ասաց աղջիկը—
չէ վոր դու հանեցիր ջրանցքից:

— Վոչ, առաջ դու տեսար, կնշանակի՝ քոնն

ենս Առանց են ել յես բոլորիցդ շատ վտանաման-
ներ եմ հավաքել:

Հիմա այդ աղջիկը միայն յերկու վտանաման
պակաս ուներ Տինգ-Փուենգից և շատ եր ուզում
շուտով մի քանիսն ել գտնել:

Այդ քաղաքում մի տեղ կա, ուր ճանա-
պարհն անցնում է յերկու խոր լճակների մեջ-
տեղով: Այդ ճանապարհը շատ նեղ է և յերբ մեծ-
անձրևներ են գալիս, ճանապարհը համարյա ծածկ-
վում է: Տինգ-Փուենգը գիտեր, վոր շատ անհար-
մար ճանապարհ է այդ, քացի նա այն ել գի-
տեր, վոր հաճախ այդտեղ կարելի յե շատ
վտանամաններ գտնել: Նա մտածում էր, թե ինչ
լավ կլինի՝ մոր համար շատ վտանամաններ տանի,
և մեկ ել՝ նա շատ եր ուզում վրցությունը տա-
նել: Տինգ-Փուենգը մյուս յիրեխաներին ասաց, վոր
ինքը գնում է դեպի լճակների մեջի ճանապարհը
և ժամը տասներկսին կվերադառնա նրանց մոտ:

Յերեխաները Տինգ-Փուենգին շատ քաջ ելին
համարում և ասացին նրան.

— Գնաս բարև, Տինգ-Փուենգ: Զգուշ կաց
և կեսորին անպատճառ վերադարձիր:

Տինգ Փուենգը յերջանիկ եր: Նա գնում եր,
վտանամանների իր ծանր կապոցը քարշ եր տալիս
ու յերգում: Լճակների միջի ճանապարհը շատ
սայթաքուն եր և լճակի ջուրը՝ շատ մոտ...

Տինգ-Փուլնդը շուտով վեց վոտնամանս դատով և
կախ տվեց իր թոկից: Ստացվեց վոտնամանների
շատ-յերկար ու շատ ծանր կապոց:

Հանկարծ լճակի հենց ավինն նա մի վոտնա-
ման տեսավ:

Նա հասավ դրան, սայթաքեց ու քիչ մնաց՝
ջուրն ընկներ: Նա այնպես վախեցավ, վոր
վոտնամանների կապոցը ձեռքից բաց թողեց և
յերկու ձեռքով կախ ընկավ լճակի ավից, վոր
կարողանա ավի դուրս գալ: Ու միայն այդ ժա-
մանակ հիշեց իր թոկը, չերբ արդեն պինդ կանգ-
նած եր ճսնապարհին: Թոկը չկար: Տինգ-Փուլնդը
չեր կարողանում հավատալ, վոր այդ այդպես
ե. — այսինքն, վոր թոկն ու վոտնամանների ծանր
կապոցը սահել, ընկել են ջուրն ու անհետացել:
Տինգ-Փուլնդը չգիտեր, թե ինչ անի: Նա մրցանակը
չի տանի — բայց դատարկ բան է այդ. — ավելի
վատն ույն է, վոր նա վոտնամաններ չունի, վոր
տանի տուն, մայրը կրակ վառելու բան չի ու-
նենա և չերբ հայրը աշխատանքից վերադառնա,
ընթրիք չի լինի նրա համար:

Տինգ-Փուլնդը լաց չեր լինում, չերբ նա
կամաց գնում եր դեպի Մեծ Չիուլ փողոցը,
բայց նրա դեմքն այնքան տխուր եր, վոր ա-
ռաջին պատահողը, ձայն տվեց նրան. — Ի՞նչ է
պատահել, այ տղա: Ենպիսի կերպարանք ունիս,

վոր կարծես յերեք որ ե՛ վոչինչ չես կերել: — Չե՛,
իսկի ել այդ չի. իսկի ել չե՛. — պատասխանեց
Տինգ-Փունգը:

— Յես կորցրի իմ հավաքած վոտնաման-
ների ամբողջ յերկար կապոցը: Ու հիմա յերե-
կոյան մեր տանը կրակ չի լինիլ: Յեվ հորս հա-
մար ընթրիք չի լինիլ:

— Կապոցդ կորցրե՞լ ես: Վո՞րտեղ: Յու՛լց
տուր ինձ, — ասաց այդ մարդը:

— Յես ցույց կտամ ձեզ. բայց միևնույն ե՛
վոչինչ չի կարելի անել: Ջուրն այնտեղ ենքան
խոր ե, վոր յեթե յերկու մարդ իրար գլխի ել
կանգնեն, ելի կծածկի, ու ենտեղից վոտնաման-
ները հանելը չի լինի:

— Չենք կարող հանե՞լ: Սպասիր՝ կտեսնես:
Յես ախր ձկնորս եմ, ու, այ, իմ մեծ ուռկանը:
Մենք կենթադրենք, վոր ձուկ ենք վորսուժ ու
քո վոտնամանները կհանենք:

Տինգ-Փունգը ձկնորսին ցույց տվեց այն
տեղը, ուր վոտնամաններն ընկել էին: Ու
ձկնորսը հանեց կապոցը: Յերկար թոկի վրա,
բոլորը, բոլորը մնում էին:

— Ա՛յ քո վոտնամանները, ասաց նա, — դե՛,
Մեծ Ձիու փողոցով, շուտով տուն վազիր:

Տինգ-Փունգը շնորհակալութուն հայտնեց
ձկնորսին և վազեց փնտռելու մյուս յերեխա-

հերին: Նրանք սպասում ելին նրան: Յերբ ամեն
մեկն ասաց, թե քանի վտնածան ե գտել, չե-
րեաց, վոր, այնուամենայնիվ, Տինգ Փուլգը բո-
լորից ավելի յե գտել:

Բայց ամենից լավն այն եր, վոր նա մոր
համար շատ վտնածաններ ուներ— վոր նա այդ
չերեկո ոջախը կվառեր: Ու չերբ հայրն ընթրիքը
վերջացրեց, ասաց.

— Դու լավ գավակ ես, Տինգ-Փուլգ: Բո
հայրը շատ բախտավոր ե, վոր քեզ պես գավակ
ունի:



II ՎԱՅ-ՊԻՆԳԻ ՆՈՐ ՏՈՒՆԸ

«Խի-ա-խո, խի-ա-խո», չերգում էր Վայ-Պինգը: Նա ուսով մի կապոց շոր խոտ էր տանում: Վայ Պինգը շատ դանդաղ էր տուն գրնում: «Խի ա-խո», չերգում էր նա ու դա շատ ուրախ չերգ է, թեև Վայ-Պինգը սաստիկ հոգնել էր, փորովհետև ա՛րբողջ որը աշխատել, խոտ էր հավաքել ու այժմ քաղցած էր: Յերգն ուրախ էր, փորովհետև նա տուն էր դալիս և մրտածում էր այն մասին, թե խոտն ինչպես լավ

կվառվի իրենց տնակի ոջախում և այն ժամա-
նակ ինչպես տաք կլինի այնտեղ: Կարմիր կրա-
կը ինչպիսի գեղեցիկ լույս ու սովեր կգցի պա-
տերի վրա: Դուան մոտ մայրն ընդառաջ կգա
նրան և խոտի մեծ խուրձը կվերցնի նրա ուսից:
Նա խոտի ծեղերը թափ կտա նրա շորերից և
կասի նրան, վոր նա պետք է հանգստանա, մին-
չև ինքն ընթրիք կպատրաստի:

Նրանց տունն այժմ մուխն է, վորովհետև
պատուհաններ չունի և լույսն ընկնում է միայն
դռնից. ցուրտ է, վորովհետև հատակը կավից է,
սառը և վոչ մի բանով ծածկված չէ: Դրանից է,
վոր տանը վտաքերն այնպես սառչում են: Վայ-
Պինգի տան տանիքը շինած է չոր խոտի հաստ
շերտից: Այդ խոտից շատ լավ հոտ է գալիս ու
գեղեցիկ գույն ունի:

Վայ-Պինգը չուր տունը տեսավ, յերբ դեռ
շատ հեռու չէր: Նա ամբողջովին շինած էր կա-
վից ու հարդից և կպած էր քաղաքի մեծ, դորշ
պատին: Մեր քաղաքներն այդպիսի պատեր չու-
նեն, ինչպիսին ունեն շինական քաղաքները:
Այնտեղ մի քանի քաղաքներ չերկհարկանի տան
բարձրությամբ պարիսպներով են շրջապատված:

Այդ քաղաքի պատի մեջ մեծ, չերկաթի դռ-
ներ կար, վորոնց մեջ ութ փոքրիկ դռնակներ:
Գիշերները դռները փակվում էին, վոր բնակիչ-

ներն ապահով լինեն: Վայ-Պինգը քաղաքից
դուրս եր ապրում: Նա ապրում եր քաղաքի պա-
տի դրախ կողմը: Նրա տունն այնպես պինդ եր
կալած քաղաքի պատին, ինչպես մի բանից վա-
խեցած չերեխան կաշոււմ ե մորը:

Յերեք տարի առաջ, այն քաղաքում, ուր
առաջ ապրում եր Վայ-Պինգը այլևս կերակուր
չեր ճարվում ամբողջ ժողովրդի համար: Նույն
իսկ փողով վոչ մի ուտելիք չեր կարելի գնել:
Վայ Պինգը շարունակ քաղցած եր լինում, նրա
մայրն ել եր քաղցած լինում, իսկ հայրը սովից
բոլորովին նիհարեց: Այն ժամանակ փոքր չեղ-
բայրը դեռ բոլորովին փոքրիկ եր և ամբողջ գի-
շերները քաղցած ու թշուռնից լաց եր լինում:

Մի անգամ Վայ-Պինգի հայրն ասաց.


— Մենք ել չենք կարող մնալ այստեղ: Այստեղ
մենք քաղցից կմեռնենք: Գնանք մի ուրիշ տեղ:

Նրանք ինչ վոր շոր ունեյին, բոլորը հա-
գան իրար վրա և իրենց մնացած իրերն ել մի
կապոց շինեցին. — Յերեք փոքրիկ բրնձի աման
եր, շինական գդալ, չերեք գուլջ ձող, վորոն-
ցով նրանք ուտում են, և մոր սանրը: Այդ կա-
պոցը Վայ-Պինգն եր տանում: Հայրը շալակել
եր չերեք մեծ վերմակներ, վոր փաթաթած ելին
յուղած քաթանի մեջ:

Վայ-Պինգը սիրում եր ճանապարհորդել: Բա-

15829

A 8466



համար: Յերբ նրանք կերան, նա վայ-Պինգին
կլոր, չուղալի թխվածք տվեց, վորի վրա քաղցր
ընկույզ եր ամած:

Այդ քաղաքում կերակրի բավական պաշար
կար և հայրը վորոշեց ապրել այդտեղ: Բայց քա-
ղաքի մեջ վոչ մի տեղ, վոչ մի տուն չկար, ուր
կարողանային նրանք բնակվել. ուստի հայրն ա-
սաց, վոր նրանք իրենց համար տուն կշինեն քա-
ղաքից դուրս, քաղաքի բարձր պարսպի մոտ:

Վայ-Պինգը ոչնուժ եր հորը, վորքան կա-
րողանում եր. — կավից աղյուսներ եր շինում,
հատակի կավը վոտքով տրորում եր, վոր պնդվի
ու հարթվի, գրկով խոտ եր տալիս հորը, չերբ
նա պատի վրա կանգնած տանիքն եր շինում:

Վայ-Պինգի համար այս տունը ամենաթան-
կագին տեղը դարձավ աշխարհում, վորովհետև
ինքն ոգնել եր նրա շինելուն: Նա սիրում եր
դռան մոտից նայել դեպի ալևելք և տեսնել ջր-
րանցքի լայն-կապույտ տարածութունը: Նա սի-
րում եր դեպի հյուսիս, դեպի սարերը տարած-
վող լայն ուղիղ հարթութունը:

Յերբեմն նա ուզում եր փոքրիկ լեղբորը
ցույց տալ այն կարմիր, քառակուսի շենքը,
Մինգ թագավորի գերեզմանը, վոր մեռել եր
սրանից շատ ու շատ տարիներ առաջ, բայց
փոքրիկ չեղբայրը չեր ուզում տեսնել: Նա խիստ

զբաղված էր սև ծղրիտի հետ խաղալով, վորը
թռչում էր, հենց վոր ինքը դիպչում էր նրան:
Մայրը լերկար, չերկնագուն թելով կապել էր
ծղրիտին, ու նա չէր կարողանում փախչել:

Նրանք շատ չերջանիկ էլին իրենց նոր տա-
նը, բայց հոր գրպանի փողը շարունակ ավելի
ու ավելի չեր քչանում ու գործ էլ դեռ չէր
ճարվում: Այնտեղ, հին տեղը, ուր առաջ ապ-
րում էլին նրանք, նա աշխատում էր դաշտում
և լավ հողագործ էր: Բայց այստեղ դաշտերում
ու այգիներում աշխատել ցանկացող մարդիկ
շատ-շատ կային և հոր համար աշխատանք չկար:
Մի անգամ նա աշխատանք փնտրելիս, մոտեցավ
քաղաքի արևելյան կողմը գտնվող մի մեծ, ըս-
պիտակ, նկարներով զարդարած տան:

Դա մի ամերիկացու ագարակ (Ֆերմա) էր,
վոր վաղուց ապրում էր Չինաստանում: Նրան
բանվոր էր հարկավոր, վոչ թե ցորեն, մայիս
կամ բրինձ ցանելու համար, այլ նրա ծառա-
տունները խնամելու: Նա կաղնի, թխկի և ելի
ուրիշ այն տեսակ ծառեր էր աճեցնում, վորոնք
չեն բանում Չինաստանում և ամերիկացին փոր-
ձում էր զարգացնել:

Ամերիկացին հարցրեց հորը:

— Իսկ դու լավ կաշխատես իմ տնկարանում:

— Ո՛ր, այ՛ն, — պատասխանեց վայ-Պինգի

հայրը. -- միայն թե ինձ աշխատանք տվեք: Յես
լավ կփափկացնեմ ծառերի միջի հողը և ամեն
առավոտ-իրիկուն, կջրեմ տունկերը:

Ու Վայ-Պինգի հայրն աշխատանք ստացավ:
Ամեն չերեկո, նա աշխատանքի համար շատ քիչ
վարձ եր-ոտանում, բայց դե ելի բավականանում
եր Վայ-Պինգի ու մոր համար. բրինձ, թարմ
արմատիք չերբեմն ել մի քիչ ձուկ գնելու համար:

Ամեն առավոտ Վայ-Պինգի հայրը վաղ եր գը-
նում տանից: Դա այժման վաղ եր լինում, վորնուչն-
իսկ արևը ծագած չեր լինում: Նա մութ ճա-
նապարհով արագ գնում եր դեպի ամերիկացու
տունը: Բոլոր բանվորներն ել այդպես վաղն ե-
լին հավաքվում և աշխատանք սկսելուց առաջ,
նախաճաշում ելին: Նրանք ուտում ելին հացի
ձևով պատրաստած բրինձ և դրա հետ բանվոր-
ներին մի քիչ ճակնդեղի թթու ելին տալիս: Չի-
նացիք սիրում են այսպիսի կերակուրը:

Ամեն որ, առավոտ վաղ, մայրը Վայ-Պին-
գին կերակրում եր և ուղարկում շոր խոտ հա-
վաքելու: Մենք մեր վառարաններում վառում
ենք փայտ կամ ածուխ, բայց այնտեղ, ուր Վայ-
Պինգն եր ապրում, ածուխը շատ թանգ ե, իսկ
փայտ գնելը հնարավոր չե: Նրանց տներում, չերբ
շատ ցուրտ ե լինում, նրանք մի քանի շոր են
հագնում իրար վրա: Այն ժամանակ, նրանք այն-

պէս հաստատուած են, վոր չեթե վայր ել ընկնեն,
Չարգվածք չեն ստանալ: Մենք չերբ մըսուած ենք,
ասուած ենք. «վնչ, մայրիկ այսոր շատ ցուրտ է».
Վայ-Պինգը կասեր «ոչ-չա, մայրիկ, այսոր ասոր
շորի ցուրտ է»:

Վայ-Պինգը ամեն որ պետք է խոտ հավա-
քեր, վորպէսզի չերեկոյան չերբ հայրը գալիս եր
ընթերելու, կրակ վառեն: Վայ-Պինգը իր հետ
վերցնուած եր մի չերկար թոկ, վոր խոտի խուր-
ձերը կապի և մի չերկար փոցխ, վոր խոտը հա-
վաքի: Այդ ո՛րը նա գնաց դեպի այն բլուրը,
վորի յետևը գտնվուած է շինական հին թագավորի
կարմիր գերեզմանը: Հին ժամանակներու շատ
եջին հարգուած թագավորին: Յերբ թագավորը մեռ-
նուած եր, նրա գերեզմանի վրա մեծ, կարմիր տուն
եջին շինուած: Այս գերեզմանը արդեն շատ հար-
չուր տարիներ եր, վոր կար և հիշեցնուած եր թե,
մի ժամանակ ուր է թողված չեղել թագավորը:
Այժմ արդեն վաղուց է, վոր Չինաստանու թա-
գավորներ ել չկան, բայց այդ շենքերը դեռ մը-
նուած են:

Թագավորի գերեզմանը շատ հեռու յեր, բայց
Վայ-Պինգը սիրուած եր նայել այն մեծ, քարե
փղերին, ձիերին ու մարդկանց, վորոնք կանգնեց-
րած եջին դեպի գերեզմանը տանող ճանապարհի
չերկու կողմերու, վորպէսզի մեռած թագավորը

մենակ շլինի: Այդպես ելին մտածում վաղուց
այտնեղ ապրող շինացիները:

Այդ ճանապարհին մի քարե փիղ կար, վորի
գլխին մանր քարերի մի կույտ կար: Իրա պատ-
ճառն այն եր, վոր շինացիք կարծում ելին, թե
յեթե մի տղա կամ մի աղջիկ կարողանա մի քար
շարտել այնքան բարձր, վոր հասնի փղի գլխին
ու քարն այնտեղից վայր շրկնի, ապա նա ինչ
վոր ուզենա, կկատարվի: Ամեն անգամ չերբ Վայ-
Պինգն անցնում եր այդ փղի մոտով, նա աշխա-
տում եր մի քար գցել փղի գլուխը: Միայն մի
անգամ հաջողվեց նրան այդ բանը ու այն ժա-
մանակ, նա աչքերը փակեց և ցանկացավ, վոր
չերբ ինքը տուն վերադառնա, իրենց տան
մոտ չեղող լճում բաժ շուշանը բացված լի-
նի: Վայ-Պինգը վաղուց եր սպասում այդ ծաղկի
բացվելուն և շատ եր ուզում, վոր բացվի: Յե՛վ
իրոք, մի որ հետո ծաղիկը բացվեց: Իհարկե
ծաղիկը կբացվեր և այն դեպքում, չեթե փղի
գլուխը նա քար չգցեր: Բայց Վայ-Պինգը հավա-
տում եր քար գցելուն: Այդ առավոտ ել նա աշ-
խատեց քար գցել, բայց վոչ մի քար չմնաց փղի
գլխին և Վայ-Պինգը շտապով հեռացավ, վորով-
հետև փղի մոտ իզուր տեղը շատ ժամանակ եր
կորցրել:

Վայ-Պինգը վազեց, բարձրացավ այն բլուրը,

վոր գերեզմանի չետևն եր: Դա միակ տեղն եր,
ուր ծառեր ելին բանում և վոչ վոք չեր համար-
ձակվում կտրել այդ ծառերը: Արեգակի լույսը
ծառերի ճյուղերի միջով թափանցելով, խաղում
եր շոր խոտերի հետ: Վայ-Պինգը չերկար ժա-
մանակ փոցխում եր խոտը, փոքրիկ կուլտեր
կազմում, վոր հետո հավաքի մեծ խուրձ շինի,
կապի ու տանի տուն:

Վայ-Պինգը մենակ չեր գալիս այստեղ խոտ
տանելու վառելու համար: Այստեղ ուրիշ տղա-
ներ ել ելին գալիս: Ահա թե ինչու խոտի մեծ
մասը հնձած ու փոցխած եր, ու Վայ-Պինգն ըս-
տիպված եր չերկար աշխատել, մինչև վոր կա-
րողացավ մի բավական մեծ խուրձ հավաքել: Նա
կապեց իր մեջքին և ուղևորվեց դեպի տուն: Նա
հոգնել եր և շատ սովել, բայց բարձրաձայն
չերգում եր իր չերգը. — «Խի-ա-խո, խի-ա-խո»:

Յերբ նա մոտեցավ գերեզմանատան դռնա-
կին տեսավ փոքրիկ չեղբորը: Նա ընդառաջ եր
չեկել Վայ-Պինգին:

— Եդ ինչ շատ խոտ ես հավաքել այսոր,
Վայ-Պինգ, ասաց փոքրիկ չեղբայրը:

— Ե՛, չե՛, իսկի ել շատ չե՛, — ասաց Վայ Պինգը:
Իր հոգու խորքում նա ուրախ եր, վոր փոքր
չեղբայրը կարծում եր, թե նա ուժեղ ե: — Ասա՛
ինձ, փոքրիկ չեղբայր, այսոր դու ի՞նչ ես շինել

— հարցրեց Վայ-Պինգը — ամբողջ ուրը խաղճում ելիր:
— Վոչ, յես մայրիկին ոգնեցի ընթրիքի
համար՝ կաղամբ լվալ: Տես, շորերս բոլորը թաց
են: Յես ուզում ելի սպիտակ սագին բռնել, բայց
նա ջուրը մտավ: Նա շատ բարկացավ և բարձր
ճչաց: Հետո յես սովեցի ու յեկա քեզ դիմա-
վորելու: Շատ զարմացա՞ր, Վայ-Պինգ, վոր յես
յեկել եմ քեզ դիմավորելու:

Մայրը խոտի խուրձը վերցրեց Վայ-Պինգի
մեջքից ու ասաց, վոր հանգստանա, մինչև ինքն
ընթրիքը պատրաստի: Վայ-Պինգը նստեց շեմ-
քումը: Արդեն մթնում էր, և թռչունները մըտ-
նում ելին իրենց բները՝ գիշերելու: Այնտեղ, ուր
արևը մայր մտավ, յերկնքի մի շատ փոքրիկ կը-
տորը վարդագույն էր, վոր անդրադառնում էր
ջրի մեջ և ջուրն էլ վարդագույն էր թվում:

Հեռվից լսվում էր ուրիշ յերեխաների ձայ-
ներ, վորոնք յերգելով վերադառնում ելին տուն:
Մի մայր կանչում էր իր տղային. «Լի ո, լի ո,
— աղաղակում էր նա: Իսկ տղան պատասխա-
նում էր նրան «լի լա, լի լա»: Բոլոր փոքրիկ
տներից ծուխ էր բարձրանում դեպի յերկինք:


Ամեն տեղ էլ ոջախները վառվում ելին և
ընթրիք ելին յեփում: Ինչքան լավ, ինչ դուրե-
կան էր նայել դեպի վարդագույն ամպերը բարձ-
րացող ծխի թեթև քուլաներին ու լսել յերեկո-
յան ձայները:

Հետո տանից լափեց մոր ձայնը.

— Վայ-Պինգ, անի, բրինձը չեփեց:

Տղան տուն մտավ: Վառվող կարմիր շոգե ը
դեղեցիկ կերպով խաղում ելին, ընկնելով կավե
պատերի վրա: Հույան ընկել էր մոր և փոքրիկ
չեղբոր չերեսին:

— Այնքան կեր, վոր կշտանաս, Վայ-Պինգ:
կեր, կշտացիր, իմ մեծ վորդիս — ասաց նրան մայրը
և քնքշությամբ նայեց նրան:



III ՆԱՎԱԿԻ ՏԵՐԸ

— Հեռու կաց, հեռու կաց վորդի, — առայ
Շի-Սոււնի հայրը, վոր կանգնած էր նեղ տախ-
տակամածի վրա և նայում էր դեպի արևմուտք:
— Արդեն խարխիս ձգելու ժամանակն է, վոր
մեր նավակը գիշերը կանգ առնի: Հեռու կաց,
վոր դիտ:

— Շի-Սոււնի կարծիքով ամառը այդ նա-
վակը աշխարհում ամենալավ տունն էր: Նրանք
ուրախ ելին, նա, հայրն ու մայրը և նոր, փոք-

ըիկ քույրիկը, վոր ապրում են նավակում: Շի-
թունը հայրիկին ոգնելիս, շատ եր աշխատում,
բայց դրա փոխարեն նա լսում եր գետի դեղին
ալիքների ճողփյունը, վոր դիպչում ելին նավա-
կի ցռուկին, տեսնում եր արևի լույսը՝ տախ-
տակամածի վրա:

Նավակը լողում եր գետնիվեր: Շի թունը
նայում եր ափերին բանած յեղեգնին: Արևի
մուտքին յեղեգը թվում եր բարձր ու սև: Ու
թվում եր, վոր նավակը կանգնած ե, իսկ յե-
ղեգնուտը գնում ե, գնում ու գնում շարունակ
դեպի մի կողմ: Ե՛, դե՛ իհարկե նավակն ամե-
նալավ տունն եր:

Շի-թունի համար ինչքան լավ եր նայել
գետին, վերջալույսին, մի կողմ փախչող յեղեգ-
նուտին, նա բոլորովին մոռացել եր, թե ինչ-
քան ժամանակ եր կանգնած այդտեղ: Ուստի
յերբ հայրը ձայն տվեց նրան, նա նույնիսկ
ցնցվեց:

— Տես, հայրիկ, ալիքներն ինչպես են վա-
զում նավակի կողքերով: Կարծես թե նրանք ու-
զում են վեր բարձրանալ ու թրջել ինձ: Յերեկ
ալիքը ջուր ցնցղեց ինձ վրա և յետ գնաց: Դա
նրանից եր, վոր դու արդեն խարխիս ելիր ձը-
գել: Ենպես չե՞, հայրիկ: Յես գիտեմ, թե գետն
ինչպես ե աղմկում, յերբ խարխիսը կառչում ե
հատակին:

Նավակը շղթան ձգեց, շուռ լեկավ ու կանգ առավ, նրա խելը համարյա հասնում էր յեղեգ-նուտին:

Հայրը տախտակամածից մի տախտակի ծայրը դրեց գետնի վրա, կամուրջ շինեց, մեծ տոպրակը վերցրեց և ափ իջավ վորպեսզի ընթրիքի համար մթերք գնի:

Հայրը մթերքը միշտ գնում էր գետի ափերին յեղող բազմաթիվ մանր գյուղերում:

Յերբ գնում էր, հայրը յետ նայեց և ձայն տվեց Շի-Սուենին:

— Յես գնում եմ, վորդիս: Հիշիր, վոր չերբ յես այստեղ չեմ, դու յես նավակի տերը: Տես, վոր բան չպատահի նավակին: Հոգ տար մորդ և քույրիկիդ: Ուշք դարձրու, վոր խարսխի շղթան չթուլանա:

Շի Սուեն, իհարկե, շատ էր հպարտ, վոր հայրը վստահում էր իրեն: Նա այնչափ սիրում էր այդ նավակը: Չափազանց գեղեցիկ էր նավակը: Նրա հատակը բոլորովին հարթ էր, բայց խելն ու ցուկը բարձրանում էին վեր ոդի մեջ: Նավակի փայտը վոսկեգույն էր ու փայլում էր, վորովհետև յուղ էր քսած:

Նավակը յերկու կայմ ուներ և յերկու դեղին, քառակուսի առագաստ: Շի Սուենը բարձրացավ վերև, վոր տեսնի, թե գիշերելու համար

լամբ են փաթաթած առազաստները: Նա ձեռք
տվեց թուկերին և ծայրերը պինդ կապ տվեց:
Մի առազաստը շատ մեծ էր, իսկ մյուսը՝ փո-
քրը: Յերբեմն կարիք էր լինում բանալ միայն
մեծ առազաստը: Հայրն այդպես էր անում,
յերբ քամին ուժեղ էր լինում և խիստ ուռցը-
նում էր առազաստը: Այն ժամանակ փոքրիկ
առազաստը ծալած-ընկած էր լինում տախտա-
կամածի վրա:

Շի-Սուենն անցավ նավակի ցռուկը, վոր տես-
նի թե վառած է արդյոք փոքրիկ ճրագը, վոր
ամբողջ գիշեր պետք է վառվի: Նա հաստատ
գիտեր, վոր հայրը վառել է ճրագը, բայց բա-
նի վոր այժմ տերն ինքն էր, Շի-Սուենը պետք
է նայեր, վոր ամեն բան կարգին լինի:

Նավակի ցռուկի վրա չերկու մեծ կլոր, կար-
միր կետեր էին նկարած: Սա մեր նավակի
աչքերն են, ասաց հայրը Շի-Սուենին: Նրանք
կարող են ավելի լավ ու ավելի հեռու տեսնել,
քան իմ ու քո աչքերը: Նրանք յերբեք չեն բը-
նում: Նրանք ամբողջ ցերեկն ու ամբողջ գիշե-
րը նայում են, վոր պաշտպանեն մեզ վտան-
գից: Նավակի աչքերը մտռախուղի միջով ել են
տեսնում: Նրանք տեսնում են այն նավերը, վո-
րոնք գիշերվա մթության մեջ անցնում են մեր
մոտով: Նրանք վախեցնում են այն չար վոզի-

հերին, վոր դալիս են մեզ չարիք հասցնելու:
Գու պետք ե ուշագիր լինես դեպի հա-
վակը, վորդիս, վոր հավակը չբարկանա մեզ
վրա և աչքերը չփակի:

Շի-Սուլնի հայրը հավատում եր իր ասածին:
Այդ բանին հավատում եր և Շի-Սուլնը: Նա սի-
րում եր հավակի աչքերը: Նույն իսկ բոլորովին
փոքրիկ նոր քույրիկին դուր եյին դալիս այդ
պաշտաւ, կարմիր աչքերը և նա ասում եր «Ա-
դու, -դու» և իր կապուշտ գոգնոցի վրա թքի
պղպղակներ եր թափում, յերբ նրան բարձրաց-
նում եյին, վոր տեսնի այդ չերկու մեծ, կար-
միր աչքերը:

Հետո, Շի-Սուլնը գնաց նայելու, թե հա-
վակի խելում լավ ե դարսված բեռը: Յուզով
լիքը մեծ կճուճները, վոր տանում եր հայրը,
բարձր դարսած եյին իրար վրա և միանգամայն
լավ դրության մեջ: Սա շատ կարևոր եր, վո-
րովհետև հայրը հենց դրա համար եր գնում վոր
տանի այդ յուզը:

Չինաստանում յերկաթուղիները քիչ են և
ապրանքատար ավտոմոբիլներ ել համարյա չկան,
վորովհետև այնտեղ լավ ճանապարհները հազ-
վագյուտ են:

Գետը չինացիների համար, դա լայն ու հար-
մար ճանապարհ ե: Յերբ մեկն ուզում ե մի բա-

դաքից մի ուրիշ քաղաք իրեր տեղափոխել, նա
նավակ ե վարձում: Իսկ նավակի տերն ապրում
ե հենց նավակի վրա, և վաստակում ե հենց
նրանով, վոր ապրանք ե տեղափոխում:

Շի Սուլնի հայրը նավակավաց եր:

Այս անգամ նա իր նավակը բարձել եր յու-
ղով լիքը կճուճներ և գետն իվեր տանում եր
յերեքհարյուր կիլոմետր հեռավորության վրա
գտնվող Նանկին քաղաքը:

Նավակն ամբողջ որը լողում եր կինամո-
նագույն գետն իվեր, առագաստները պարզած
և չեթե լուսնկա յեր լինում և քամին շեր դա-
դարում, ապա նավակը գիշերն ել եր լողում:
Բայց ավելի հաճախ նավակը գիշերները խա-
րիսխ եր ձգում ավի մոտ:

Նավակում ամենալավ տեղը, բացի մեծ ա-
ռագաստի կողքից, ուր ուժեղ քամու ժամանակ
Շի-Սուլնը սիրում եր կանգնել, տախտակամա-
ծի տակի սենյակն եր: Շի-Սուլնն այնտեղ եր
քնում, մայրն այնտեղ եր նրա համար կերա-
կուր յեփում և խնամում շատ փոքրիկ քույրի-
կին: Սա մի ցածլիկ, մութ սենյակ եր: Այնտեղ
իջնելու համար Շի-Սուլնը հատակի տախտակնե-
րից մեկին կպցրած ողակից բաշեց, — տախտակը
բարձրացավ ու մի կլոր ծակ բացվեց: Այդ անց-
քից ցած եր իջնում մի փոքրիկ, դիք, փայտե
սանդուխք:

Մայրն ու փոքրիկ քույրիկը ցածուսն եյին։
Շի-Սուսը մտածեց, վոր նախ քան խարխախի
շղթաները գիշերվա համար ամրացնելու գնալը,
պետք է նրանց հայտնել, թե ինչի կարիք ու-
նեն նրանք։ Նա ողակից քաշեց, դոնակը բաց
արավ ու ձայն տվեց — ներքև։

— Ո, Մա, այդտեղ ե՞ս։ Ի՞նչ կա այդտեղ։
Փոքրիկ քույրիկը վճճեց եւ Հայրիկը դեռ չի յե-
կել, բայց յես կարծում եմ շուտով կգա։

— Հա, վորդիս, յես կրակ եմ անում, իսկ
փոքրիկ քույրը հանգիստ քնած է։ Առագաստ-
ները ծալած են։ Տես, վոր խարխախը չպոկվի։
Ուշադիր յեղիր իմ մեծ վորդի։

Շի-Սուսը ուզում էր գնա խարխախին նա-
յելու, բայց հենց այդ ըսպելում ներքևում լա-
ցի ձայն լսեց։ «Իա Մայ. Մայ.ն է, դարթնել է
ու լաց է լինում, — մտածեց նա։ Մայրս զբաղ-
ված է։ Պետք է ցած իջնել և քույրիկիս նա-
նիկ ասել»։

Կամայց, շատ կամաց, նա ցած իջավ սան-
դուխքով և կիսախավար սենյակով անցավ այն
անկյունը, ուր պառկած էր քույրիկը։ Նա մահ-
ճակալ շուներ։ Նա միայն յերկու մեծ, կապույտ
վերմակ ուներ։ Նրան լավ փաթաթել էյին այդ
վերմակների մեջ և դրել ուղիղ գետնին։ Նստա-
կի տատանումը որորում էր նրան, իսկ նստա-

կին քսվող չեղեգների շրջուներ նրա նանիկն էր։
Մայ-Մայը յերկար ժամանակ քնած էր ու հի-
մա սովել էր, ուստի լաց էր լինում ու իր հաստ
կլնամոնագուչն տոտիկներով քացի չեր տալիս
և իր հաստ կլնամոնագուչն թաթիկները շար-
ժում։ Նա լաց էր լինում, քացի քացի անում,
այնպես վոր վերմակի միջից համարյա դուրս
էր չեկել։ Շի-Սուն քնքուշությամբ փաթաթեց
նրան։

— Ա՛, ա՛յ, ասաց նա, — ինչպես քացի յես
տալիս։ Դու պետք է տղա լինելիր։ Են ժամա-
նակ, վոր մեծանայիր, մեծ ու ուժեղ նավակա-
վար կդառնայիր։ Լաց մի լինիր։ Յես քեզ շուռ
կտամ դեպի արևմուտք։ Արևելյան բոլոր յե-
րագները դու արդեն տեսել ես — թե ինչպես է
արեգակը ծագում, թե ինչպես է նա անագին
վոսկե ձկան նման, խճճվում ցանցում-ամպերի
մեջ։ Մայ-Մայն, իհարկե, չեր հասկանում Շի-
Սունի ասածը, բայց նա ճանաչում էր նրա ձայ-
նը և դեպի արևմուտք շուռ տալը դուր յեկավ
նրան։ Շի-Սունը շատ կամացուկ խփում էր
նրան և յերգում այն յերգը, վոր նրա համար
յերգում էր մայրը, յերբ նա փոքր էր։

Նանա, մանկիկս, նանա
Յերագներն արևելյան,

Տեսանելի չեն լինում
Մանուկներին միայն:

Նանահ, Մայ-Մայ ջան, նանահ,
Հոգնեցիր դու պառկած,
Վերմակդ ել արդեն
Գետին եր ընկած:

Վաղուց ե լիբը
Աչքերդ արցունքով,
Դեպ Մայ-Մայն թռեր,
Յերազներ շուքով:

Չախ կողքիդ վրա
Կըշքեմ յես քեզ,
Հանգիստ նանիկներ
Կյերգեմ յես քեզ:

Դու հանգիստ առար
Չախ կողքիդ վրա,
Դե, ամուր քնիր,
Իմ սիրուն բալա:

Կարծես թե նավակն ոգնում եր Մայ-Մային որորելու. նա յետ ու առաջ եր տատանվում: Շի. Սուենը մտածեց, հո խարխիսիւր չի թուլացել, վոր նավակն այնպես ուժգին տատան-

վում է: Հենց վոր Մայ Մայը քնեց, նա վեր
վազեց խարիսխին նայելու: Յերբ նա սանդուխ-
քով վեր եր բարձրանում, նրան թվաց, վոր նա-
վակը մի տեսակ տարորինակ կերպով շարժվում
է, իսկ յերբ բարձրացավ տախտակամածի վրա,
նա ել շտեսավ այն գյուղի ճրագները, ուր գը-
նացել եր հայրը:

Շի. Խուհը վազեց տախտակամածով ու տե-
սավ, վոր նավակն իրոք շարժվում է, իրոք հե-
ռացել է ափից: Սկզբում նա այնպես վախե-
ցավ, վոր չկարողացավ տեղիցը շարժվել: Ի՞նչ
կասի հայրը: Շի Խուհն ի՞նչպես կվերադառնա
այն գյուղը և ինչպես կգտնի հորը: Ո՛ր, ինչու
նա ամենից առաջ չնայեց, թե արդյոք լավ է
ամրացրած խարիսխը: Նա ուզում եր լաց լի-
նել: Հետո նա հիշեց, թե հայրն ինչպես ասաց.
— «Նավակի տերը դու յես վորդիս»: Շի. Խուհը
վորոշեց, վոր ինքը քաջ պետք է լինի:

«Յես կկանչեմ մորս, — մտածեց նա: Յեր-
կուսով մենք կկարողանանք նավակը շուռ տալ,
մենք կբարձրացնենք մեծ առագաստը»:

Նա վազեց դեպի սենյակի դռնակը և կան-
չեց մորը: Մայրը կերակուր յեփելը թողեց ու
արագ բարձրացավ տախտակամած:

— Մի վախենար դավակս, ասաց նա —

մենք յերկուսով ենք ու դու չե՛լ ուժեղ ես: Մենք
հորից կլողանք դեպի ափը:

Շի-Սուհը, չերբեք այնքան շատ չե՛ր աշխատել: Նա խարիսխը, վոր նավակի յետևից գետի հատակին քարշ եր գալիս, բարձրացրեց նավակը, ու նրանք յերկուսով, մոր հետ, բարձրացրին ու ամրացրին մեծ առազաստը: Յերբ նրանք աշխատում եյին, մայրը խոսում եր նավակի հետ: «Նավակի աչքեր ոգնեցե՛ք մեզ: Մեր փոխանակ նայեցե՛ք մթության մեջ: Մենք շատ քիչ կարող ենք տեսնել, ու մենք չգիտենք այս աշխատանքը»: Վերջապես նավակը մոտեցավ ափին ու մթության միջից լսեցին հոր ձայնը:

— Այստեղ եմ, այստեղ եմ, վորդիս: Քշեցե՛ք դեպի արևմուտք: Հիմա իջեցրե՛ք առազաստը: Մի քիչ հետո հայրը թռավ նավակը, հորից ջուրը գցեց խարիսխը ամրացրեց այն: Մայրը նստեց տախտակամածի վրա՝ հանգստանալու:

Շի-Սուհը նայեց հորն ու ասաց.

— Յես չկարողացա՞ լավ տեր լինել նավակին, հայր:

— Վո՛չ, իմ փոքրիկ տղաս, դու լավ տեր ելիր, վորովհետև յերբ փորձանքը պատահեց, դու հիշեցիր բոլորը, ինչ վոր յես քեզ ասել ե-

Յ Ա Ն Կ

	Եջ
Ծղոտե վոտնամաններ	3
Վայ-Պինգի նոր տուներ	15
Նավակի տերը	27





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0045471

[124.]

A. 8466

ԳԻՆԸ 15 ԿՈՊ.